ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2020 թվականի թիվ 153 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ /ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ/ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ մասով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության գործող առողջապահական կազմակերպությունների լրիվ մաշված /օգտագործման համար ոչ պիտանի/ գույքի դուրսգրման համար սահմանել վերջնաժամկետ մինչև 2020 թվականի հունիսի 25-ը:
2.Առողջապահական կազմակերպությունների տնօրեններին՝ լրիվ մաշված /օգտագործման համար ոչ պիտանի/ գույքը դուրս գրել համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկային նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված /օգտագործման համար ոչ պիտանի/ գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին» թիվ 787-Ն հրամանի պահանջների:
3.Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական Արբակ Գրիգորյանին:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

5/25/2020

X

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050

2020թ. Մայիսի 25
ք.Իջևան